

Ա. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՔԻ ԶԵՐԱԳՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՈՒԽՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐ

Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը, ինչպէս հայ ձեռագրերի ուրիշ շատ կենտրոններ, ժամանակի ընթացքում հաւաքել ու պահպանել է գրաւոր շատ յուշարձաններ: Անմոռանալի է Նորայր Արքեպոս. Պողարեանի վաստակն այս յուշարձանները հայագիտական ուսումնասիրութիւնների լայն անդաստանը բերելու գործում:

Ն. Արքեպոս. Պողարեանը տքնաջան եւ եռանդուն աշխատող է եղել: Նա բացառիկ անուններից մէկը եղաւ հայ բանասիրութեան, ի մասնաւորի մեր ձեռագիր աղբիւրների պահպանութեան կազմակերպման, մանրամասն հետազոտման եւ գիտական դասակարգման մէջ:

Մեզանառում եղել են բանասիրներ, որոնց տարիների գիտական վաստակը, օրերի եռանդը պատկառանք են ներշնչում, երկիւղ են պատճառում ակնածանքի մէջ: Նրանց անունը երախտիմաց յետնորդների, իրենց իսկ գործընկերների շուրջերին նշան էր անձանձիր զբաղումի, առհաւատչեայ նուիրումի եւ աղբիւր ոգեշնչման: Կարծել ենք, թէ նրանք ծնունդն են իրենց կոչումի, ապրել են նախախնամութեամբ՝ գործին նուիրեալ, հունձքին միշտ հասու: Նրանք եղել են հնում, մեզ մօտիկ անցեալում, եւ ահա նաեւ մեր օրերում: Եթէ անուն առ անուն խօսենք, շատ անուն պիտի ասենք, մի քանիսի անունը պէտք է տանք, յիշելու ենք նաեւ Ն. Արքեպոս. Պողարեանին:

Շատերն են զբաղուել հայ ձեռագրերի գիտական ուսումնասիրութեամբ եւ նկարագրութեամբ, մէծ անուններ կան նաեւ հայ ձեռագրագիտութեան ասպարէզգում: Ն. Արքեպոս. Պողարեանը Ս. Յակոբեանց վանքի ուսումնառու գաւակն է, նոյն վանքի հայ ձեռագրերի անխոնջ մշակը, որ իր թէ՛ կազմակերպական եռանդով, որ կարողացել է տնօրինել ձեռագրաց մատենադարանը, թէ՛ հետազոտական անդուլ աշխատանքով, որ ի օրու է եղել գրեթէ իր լրումին հասցելու յիշեալ ձեռագրերի աղբիւրագիտական նկարագրութիւնը՝ լրյա աշխարհ հանելով տասներկու ստուար եւ մեծաղիր հատոր գրքեր:

Այդ գրքերն են, որ այս պարագայում մեզ աւելի են գրաւում, թէեւ այլուրեք անշրջանցելի են հմուտ բանասիրի միւս հրապարակումները, գիտական յօդուածները (Յովհ. Թլկուրանից, Գր. Ակներցի, հայ գրողներ՝ Ե-ԺԵ դարերուն եւ այլն):

Ի տարբերութիւն շատերի՝ Ն. Արքեպոս. Պողարեանը մինչեւ այս կամ այն ձեռագիրը նկարագրելը գիտէր այն իր խորութեամբ ու ամբողջութեան մէջ: Ուստի նա այնպիսի կռահումներ էր անում (Հեղինակի, թարգմանչի, ձեռագրի ժամանակի վերաբերեալ), որոնք հետագայում այլ նիւթերի հիման վրայ լիովին ապացուցելի էին դառնում: Դրանով նա հետագայ անելիքի ամուր հիմքեր էր դնում: Եւ այսօր գրեթէ դժուար է զբաղուել հայագիտութեամբ առանց մեր շատ ու շատ ձեռագրերի ուսումնասիրողների այդօրինակ աշխատանքի արդիւնքների վրայ յենուելու:

Մեզանում ոչ շատերն են, որ մեր ողջ մատենագրութիւնը անդուլ տքնութեամբ ուսումնասիրել են եւ այդպէս իմացել մեզ հասած ձեռագրերն ու պատառիկները: Ն. Արքեպոս. Պողարեանը մէկն էր մեզանում, որ գիտէր հայ

մատենագրութիւնն ամէն պարագայի՝ ըստ բովանդակութեան եւ գիտական ճիւղի պատկանելիութեան, ըստ ժամանակի եւ երեւան գալու հանդամանք-ների: Նա հիանալի ձեւով գիտէր հայ եկեղեցին, մատենագիտօրէն հարստաց-նում է յետնորդներիս պատկերացումները եկեղեցական եւ դաւանարանական, աստուածաբանական եւ ծիսական հարցերի շուրջ: Մեր ծիսակարգի մասին Ն. Արքեպս. Պողարեանի հեղինակած աշխատանքները հիմք են հանդիսանում հետագայ ուսումնասիրութիւնների համար:

Լինելով այդքան բազմազբաղ եւ ձեռագրագիտութեան մէջ այդպէս խորամուխ՝ Ն. Արքեպս. Պողարեանը մեծ վաստակ ունի կրթական գործի առումով: Նա կրթել է հայ եւ օտարազգի շատ հայագիտների եւ հայերէն իմացողների, որոնք ետախտագիտութեամբ են տուել իրենց ուսուցչի անունը, խոնարհութեամբ յիշել նրան:

Ն. Արքեպս. Պողարեանի համար գրաբարը բանիրուն ձեւով իմանալի լեզու էր, իսկ մեզանից շատերիս համար հին գրոց լեզուն մի տեսակ սովորովի է եղել: Նա գրաբարը գիտէր բնական վիճակով, մեզ համար այն ուսուցեալ լեզու է: Այդպէս եւ հայերէնի միւս գոյաձեւերը՝ միջին հայերէն կոչենք, թէ աշխարհաբար, հայ բարբառներ լինեն, թէ օտարամուտ վիճակով (ասորաբան, յունաբան, լատինաբան եւ այլն) լեզուական տարրերակ: Գրաւոր աղբիւրների նման իմացութիւնը նշտագոյն ուղի է հայ բազմաթիւ ձեռագրերն ըստ ժամանակի եւ ըստ հեղինակի առանձնացնելու, ոճական այս կամ այն ոլորտին յատկացնելու գործում: Այսպէս, 15-18-րդ դդ. հայերէն գրաւոր աղբիւրները, որոնք զեռեւս մեծամասամբ, եթէ ոչ լիատակար, հրատարակուած չեն, լեզուական առումով շատ ուշագրաւ նիւթ են պարունակում ոչ միայն բառապաշարի կամ բառամթերքի առումով, այլեւ ժամանակի գրաւոր խօսքի բոլոր չափանիշներով: Այսօր այնքան էլ դժուար չէ տարրերել, օրինակ, Եզնիկի, Խորենացու, Փարպեցու լեզուն միւս հեղինակների լեզուից, նոյնիսկ յունաբան եւ այլ ազեցութեամբ լեզուական ատազք ունեցող շատ ու շատ երկեր հնարաւոր է զանազանել այլ կարգի երկերի լեզուից: Սակայն հետագայ դարերի շատ երկեր, գրաւոր յուշարձաններ բաւական դժուար է քննութեան առնել լեզուի տեսակիտից: Եւ այս եւ նման շատ հարցերում մեզ օգնութեան են գալիս հայ ձեռագրերի բազում գիտակների, այդ շարքում նաեւ Ն. Արքեպս. Պողարեանի աշխատանքները:

Եւ այսօր մենք չենք կարող լիարժէք հայագիտութեամբ եւ հայերէնի ուսումնասիրութեամբ զբաղուել, եթէ մեր ձեռքին կամ սեղանին չունենանք Տաշեանի, Անասեանի, Պողարեանի գրքերը, նրանց տքնաջան վաստակի արդիւնք մատենագիտական եւ աղբիւրագիտական ցուցակներն ու ցանկերը:

Շուրջ երեք հազար ինն հարիւր ձեռագիր է նկարագրում եւ մեզ տրամադրում Ն. Արքեպս. Պողարեանը: Ասելն է հեշտ, եւ խօսելն է դիւրին: Եւ լեզուի պատմաբանի ու բանասէրի համար այդ ձեռագրերի նկարագրութիւնն ու հատուածական (վերնագրային, յիշատակարանի, բնութագրիչ տեղերի եւ այլն) մէջբերումները, եթէ նոյնիսկ բացառենք բուն ձեռագրերը, բաւական շատ նպաստաւոր կարող են լինել բանասիրական աշխատանք ծաւալելու լեզուի պատմութեան ուսումնասիրման շատ փաստեր ձեռքի տակ ունենալու համար:

Հայոց լեզուի պատմութեան ուսումնասիրութեան բնագաւառում հայերէնագիտութիւնն այսօր հասել է որոշակի ձեռքբերումների: Տարբեր

ժամանակներում, ինչպէս նաեւ մեր օրերում գրուել են այդ բնոյթի մի շարք աշխատութիւններ, որոնցում այս կամ այն չափով օգտագործուած է հայերէն գրաւոր աղբիւրների լեզուական նիւթը: Այսպէս, 18-19-րդ դդ. գրաբարի պատմութեանը նուիրուած զգալի թըւով աշխատանքներ կան այսօր, որոնցում ըստ հնարաւորին օգտագործուել են բառապաշարի, ձեւարանական եւ շարահիւսական իրողութիւններին վերաբերող փաստերը, եւ որոնք գալիս են նոր պատկերացում տալու ոչ միայն գրաբարի ոչ կենդանի գործառութեան պայմաններում ինքնուրոյն զարգացման, այլեւ ժամանակի աշխարհաբարի հետ նրա ունեցած բազմատեսակ առնչութեան, նրա առաջընթացին նպաստելու մասին: Այս բնոյթի աշխատանքներ հետագայում եւս կարելի է ծաւալել, որոնցում էլ ըստ անհրաժեշտութեան պիտի հաշուի առնուի ոչ միայն հնատիպ գրքերում եղած, այլեւ ձեռագիր մատեաններում կուտակուած լեզուական նիւթը: Այս տեսակէտից եւս անշրջանցելի եւ արժէքաւոր փաստեր ու տուեալներ են պարունակում նաեւ մեր ձեռագրերի ցուցակները, յիշատակարանները եւ այլն:

Այս նկատառումով էլ հարկ ենք համարում աւելի մանրամասն խօսելու Ն. Արքեպոս. Պողարեանի կազմած ձեռագրերի ցուցակների մասին:

Ձեռագրերի նկարագրութիւնը բաւական խորն է ու հակիրճ: Լեզուական յատկանշական կողմերն այդ ձեռագրերում պահպանուած են անխաթար եւ անվրէպ: Դրանք այնքան վստահելի են, որ հայոց լեզուի պատմութեան այս կամ այն երեւոյթի ուսումնասիրման դէպքում նոյնիսկ կարելի է առաջնորդուել ձեռագրերի ընձեռած տուեալներով: Իսկ աւելի առաջ գնալու դէպքում միանգամայն դիւրին է դառնում բուն ձեռագրերին դիմելու հնարաւորութիւնը:

Ձեռագրերի սոյն ցուցակները վստահելի նիւթ են պարունակում հայերէնի պատմական հնչիւնաբանութեան, պատմական բառագիտութեան եւ քերականական կառուցուածքի պատմական հետազոտութեան համար:

Այս նկատառումով անհրաժեշտ ենք համարում խօսելու բառապաշարի պատմութեան հետ կապուած մէկ-երկու փաստի շուրջ:

Ն. Արքեպոս. Պողարեանի կազմած ձեռագրերի ցուցակին 1-ին հատում (էջ 463՝ Զեռ. 154 դ-ի յիշատակարան, ժամանակը՝ 1727թ.) հանդիպում է մեղսամած «մեղքերի մէջ թաթխուած» բառը: Վերջինս չենք գտնում «Նոր հայկագեան բառարան»-ի մէջ (Հ. 2, 249), սակայն կայ Մալխասեանցի բառարանում (Հ. 3, 301): Մալխասեանցը բառը քաղել է «Առձեռն բառարանի»-ից, այսինքն՝ յայտնի չէ, թէ բառի գործածման աղբիւրը որն է Յիշեալ ձեռագրի տուեալի հիման վրայ առայժմ կարող ենք արձանագրել, որ մեղսամած բառը հայերէնում գործածուել է առնուազն 18-րդ դ. առաջին կէսին:

Ձեռագրացուցակի նոյն հատորի նոյն ձեռագրի յիշատակարանում հանդիպում են սրովքակենցաղ «սերովքէից ձեւով ապրող» բառը, որը դարձեալ բացակայում է «Հայկագեան բառարան»-ից (Հ. 2, 762), ուստի այս դէպքում նաեւ հետագայ բառարաններից: Այնինչ, մեր լեզուի պատմութեան համար շատ կարեւոր այդ բառը պիտի ընդունենք յիշեալ ձեռագրի հիման վրայ այնքան ժամանակ, մինչեւ որ այն հնարաւոր լինի ժամանակագրականօրէն տեղաշարժելու:

Այսպէս նաեւ «Նոր հայկագեան բառարան»-ը չունի աստուածառոյդ «աստուածային առութիւն, կամ Աստուծոյ չնորհեալ առութիւն», քառաջեալ

«չորս աջով, չորեքկողմեան աջ եւն» բառերը (տես հ. 1, 329, հ. 2, 992): Այդ բառերն, օրինակ, չկան նաեւ Մալխասեանցի բառարանում (հ. 1, 246. հ. 2, 555) : Ուստի եթէ կարելի էր կարծել, թէ հայերէնում առհասարակ նման բառեր երբեւիցէ գործածուելիս չեն եղել, ապա չնորհիւ Ն. Արքեպս. Պողարլանի կազմած սոյն ձեռագրերի ցուցակի կարող ենք այդ բառերը դարձնել հայոց լեզուի պատմութեան ուսումնասիրութեան վստահելի փաստ:

Ոչ միայն այդ եւ նման «նորագիւտ» բառերը, այլեւ ժամանակի խօսակցական տարրերակների բնորոշ, այլ լեզուներից փոխ առնուած բազմաթիւ բառեր ու բառաձեւեր, իբրեւ մէկ շտեմարանի մէջ, ամբարուած են այդ ձեռագրերի ցուցակների հատորներում: Այս հանգամանքը նկատի ունենք, երբ ասում ենք, թէ մեր օրերում դժուար է ուսումնասիրել հայոց լեզուի պատմութիւնը, եթէ նոր պայմաններում չենք օգտագործելու լեզուական այդ նիւթը: Լաւագոյն հնարաւորութիւնը կայ, եւ մնում է համապատասխան եռանդ ի գործ դնել:

Ժամանակը եղել է ընթացք, որ մեզ է բերել հայերէն գրաւոր յուշարձանների մասին ձեռագրագիտական եւ աղբիւրագիտական տուեաներ, նիւթեր, եւ ժամանակը ճանապարհ է հարթելու այդ տուեաներն ու նիւթերն ըստ ամենայնի քննութեան առնելու, հայագիտութեան շատ խնդիրներ նոր պայմաններում լուծելու: Այս գործին մեծապէս նպաստում են մեր երախտաշատ բանասէրների ձեռքբերումները: Այդ գործում մեծ է հայ ձեռագրի մեծագոյն գիտակներից Ն. Արքեպս. Պողարեանի վստահը:

**ՎԱԶԳԵՆ Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուաբանութեան
ինստիտուտի բաժնի վարիչ, բանասիրական
գիտութիւնների դոկտոր**

**ԱՐՄԵՆ Գ. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ
Մաշտոցի անուան Մատենադարանի աւագ գիտաշխատող,
բանասիրական գիտութիւնների թեկնածու**